www.mediaforedu.am
Տեղեկատվական-վերլուծական կայք
Երևան, Հայաստան

ՀՀ վարչապետ
Նիկոլ Փաշինյանին

ՀՀ ԿԳՄՍ նախարար
Ժաննա Անդրեասյանին

Հարցում

Հարգելի պարոն Վարչապետ,

Հարգելի տիկին նախարար,

ՀՀ կառավարության 06.08.2026 թ. նիստում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ահազանգ հնչեցրեց, որ այս տարվա ընդունելության քննությունների ժամանակ անբավարար գնահատականներ ստացած դիմորդների թիվը նախորդ տարվա համեմատ զգալի աճել է: Վարչապետը նաև նշեց, որ կրթական բարեփոխումների իրականացման ընթացքում «շատ են գնացել կոմպրոմիսների» և ընդգծեց, որ անհրաժեշտ է ավելի վճռական ու հատու քայլեր ձեռնարկել:

Գնահատման և թեստավորման կենտրոնի ամփոփվող տվյալներով, այս տարի բուհական համակարգի ընդունելության քննություններին դիմել է 15 680 հոգի: 3200 դիմորդ անբավարար գնահատական է ստացել՝ 7.5 միավորից ցածր: Նախորդ տարի անբավարար ստացողները 2500 – ն են եղել: Ըստ ԳԹԿ – ի, դա նշանակում է՝ թեստի 80 առաջադրանքից 50 – ից ավելի սխալ են արել:

Միաժամանակ, ՀՀ պետական բյուջեի տվյալների վերլուծությունը վկայում է, որ վերջին տարիներին կրթության ոլորտի ֆինանսավորումը զգալի աճել է, այդ թվում՝ կրթության բովանդակության, մեթոդական ապահովման, ուսուցիչների վերապատրաստման և ատեստավորման ծրագրերի ուղղություններով: Ավելին. եթե 2008-ին 103.5 մլրդ դրամ էր հատկացվել կրթությանը, 2026-ին նախատեսված ծախսը 384.8 մլրդ դրամ է:

Digitally signed by ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
5307760450
2026-08-06 15:39:44 GMT+04:00

Հաշվի առնելով վերոգրյալը և Վարչապետի հայտարարությունների կապակցությամբ ուսուցիչների արձագանքները՝ խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցերին.

1. Նախքան դիմորդների տվյալների նախնական ամփոփումը ի՞նչ գնահատում է նախաձեռնել կառավարությունը կրթության որակի ուղղությամբ ֆինանսական ներդրումների արդյունավետության վերաբերյալ: Եթե իրականացվել է գնահատում, խնդրում եմ տրամադրել համապատասխան տվյալները:

2. ՀՀ Վարչապետը հայտարարեց, որ որոշումները պետք է «հստակ, հատու և վճռական ձևով իրականացվեն»: Խնդրում եմ հստակեցնել՝ ինչ ժամկետներում են նախատեսվում որոշումների կայացումն ու իրականացումը:

3. Վարչապետի հայտարարությունից հետո ի՞նչ կոնկրետ գործողություններ կամ բարեփոխումներ է նախատեսում իրականացնել ԿԳՄՍ նախարարությունը՝ հանրակրթության որակի բարելավման նպատակով:

4. Նախատեսո՞ւմ է նախարարությունը հանրությանը ներկայացնել կրթության որակի բարելավման գործողությունների նոր ճանապարհային քարտեզ կամ ծրագիր՝ չափելի նպատակներով և արդյունքային ցուցանիշներով:

5. Ի՞նչ լրացուցիչ աջակցության միջոցներ են նախատեսվում այն դպրոցների և ուսուցիչների համար, որտեղ սովորողների ուսումնառության արդյունքները երկար ժամանակ մնում են ցածր:

6. Ի՞նչ մեխանիզմներով է կառավարությունը նախատեսում ապահովել, որ կրթության ոլորտում պետական բյուջեի շարունակական աճը վերածվի կրթության որակի և սովորողների ակադեմիական արդյունքների շոշափելի բարելավման:

www.mediaforedu.am
Տեղեկատվական-վերլուծական կայք
Երևան, Հայաստան

Նկատի ունենալով հանրակրթության որակի բարձրացման կարևորությունն ու հանրային արձագանքը՝ խնդրում եմ այս գրությանը պատասխանել մանրամասն և հստակ, ներկայացնել ամբողջական տեղեկությունները՝ ըստ հարցերի համարակալման, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված հնգօրյա ժամկետում:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝ Անուշ Մարտիրոսյան

«Մեդիան հանուն կրթության» ՀԿ նախագահ

ՄՀԿ ՀԿ
MFE NGO

mediaforedu.am կայքի խմբագիր

06. 08. 2026 թ.

էլ. փոստ՝ mediaforeducation.ngo@gmail.com

հեռ.՝ +374 41 12 22 72